

“ՓՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՊՈՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺՉ.

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1887

ԹԻՒ 5

ԼՈՐՏ ՏԵՅՐԻՆ

Լորտ Տրֆրին, փոխարքայն Հնդկաստանի, Անգլիացի դիւանագիտաց մէջ ամենէն քաջածանօթ և ամենէն արժանաւոր անձերէն մին է: Յիրաւի՛ բուռած է անոր համար թէ “կը ներկայացունէ յինքեան ամէն ինչ որ լաւագոյն է Բրիտանական դիւանագիտութեան մէջ.” Երևաւ իրլանտա գրեթէ 61 տարի առաջ: Իւր Երիտասարդական հասակին բռնեց կարեոր դիրքեր կառավարութեան պաշտօններուն մէջ այնպիսի հանճարով և հաւատարմութեամբ որ յամին 1870 Վիքթորիա թագուհին ըրաւ զնա կոմս, որով արտօնութիւն կ’ունենար նստել Լորտերու ժողովին մէջ ցկեանս: 1872 է մինչև 1878 կարգուեցաւ ընդ-



ԼՈՐՏ ՏԵՅՐԻՆ

բարկանան այլևայլ ցեղերէ որ աւելի կամ նուազ թշնամի են իւրարու, և անոնցմէ և ոչ մին կը սիրէ Անգլիոյ իշխանութիւնը: Հընդկաստանի հիւսիսային կողմն է Աֆղանիստան, որուն սահմանագլխոց մտեցած է Ռուսիա. և փոքրիկ սխալ մը կրնայ պատճառ ըլլալ պատերազմի: Վասն որոյ պէտք կայ այնպիսի կառավարչի մը որ ունենայ մեծ իմաստութիւն և զգուշաւորութիւն. և ահա այսպիսի անձ մըն է Լորտ Տրֆրին: Լորտ Տրֆրինի կինն ևս արժանաւոր ամուսին մըն է անոր, և նուիրած է իւր անձը բարձրացունելու Հնդիկ կանանց վեճակը: Իցի՛, ընդ երկար վարէին իրենց պաշտօնն յօգուտ Հնդկաստանի:

հանուր կառավարիչ Գանատայի Հիւսիսային Ամերիկայի մէջ: Այնուհետև եղաւ Բրիտանական դեսպանի Կոստանդնուպոլսոյ, և անոր իբրև արժանագունի յանձնուեցաւ դժուարին գործը պատրաստել սահմանագրութիւն մը Եգիպտոսի, այն երկրին Բրիտանական զօրքերէն գրաւուելէն ետքը: Իսկ 1884էն հետէ կարգուած է փոխարքայ Հնդկաստանի, որ այս է Առաջին Պաշտօնէէն ետքը թերևս կարեորագոյն պաշտօնը զոր կրնայ շնորհել Վիքթորիա թագուհին: Արդարև սա ամենէն բարձր թոշակով պաշտօնն է Բրիտանական Պետութեան

մէջ: Լորտ Սալզբորի կ’ընդունի Անգլ. 5,000 ոսկի միայն տարեկան թոշակ, երկու բարձրագոյն աստիճանի դատաւորք կ’ընդունին մին 8,000 և մին՝ 10,000, Գէնթըրպրիի արքեպիսկոպոսը կ’ընդունի 15,000, բայց Հընդկաստանի փոխարքան կ’ընդունի 20,000 Անգլ. ոսկի: Եւ այս վայելուչ է, վասն զի Վիքթորիա թագուհւոյն 320 միլիոն հպատակաց 263 միլիոնն են Հնդկաստան, և անոնց կառավարչն է Լորտ Տրֆրին: Եւ Հնդկաստանի ընդարձակ տարածութիւնը չէ միայն որով այսչափ կարեւորութիւն կը ստանայ այն: Հնդկաստանի բնակիչք կը

ԶԻՆՈՒՈՐԻՆ ՆԱՄԱԿԸ ՍԻՐԵԼԻ ՏԻԿԻՆ,

“Այս նամակը կը գրէ քեզ այն որբ տղան որ մանկութեան ժամանակ կը ճանչցուէր թոմի ֆինկ անունով, որ սովորաբար քու Սուրբ Գրոց դասի աշակերաներուդ մէջ կը գտնուէր երբ դուք կը բնակէիք ի Պ—: “Ես հիմա կը մեռնիմ զինուոր Հընդկաստանի հիւանդանոցի մը մէջ: “Իբր ընդունիք նամակս, պիտի գտնուիմ արդէն երջանիկ երկիրը, որուն վրայով սովոր էինք երգել “Օրհնեալ աշխարհ մը կայ երկրէս հեռու.”


երբ կ'աչակերտէի ձեր Սուրբ Գրոց դասին :

«Անշուշտ ուրախ կ'ըլլաս լսելով թէ ես եմ Աստուծոյ շնորհօք փրկուած մեղաւոր մը :

«Սուրբ Գրոց բնաբանները զորս սորվեցայ երբ կը գտնուէի դասիդ մէջ, օրհնութեան ինձ համար Աստուծոյ Մնոր Հոգւոյն միջոցաւ : Բնաբան մը, այն է «Իս եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք ,» մասնաւորապէս

Բոլոր Գրիտոնեայք ունին ընելու բան մը Տէր Յիսուսի համար : Թերևս փոքր բան մը ըլլայ այն , բայց ընենք այդ փոքրը : Միակ խօսք մը որ կը խօսուի ընկերի մը , դպրոցի աշակերտակցի մը , կամ բարեկամի մը , փոքրիկ տետրակ մը որ կը տրուի անցորդի մը , թերևս պիտի ըլլան սերմեր՝ ցանուած աղէկ հողի մէջ , որ կանուխ կամ ուշ պիտի բերեն պտուղ ի փառս Փրկչին :

քանչիւր նաւ նշան կու տայ միւսին պարզելով դրօշակ , իմացունելով թէ ինչ նաւ է : Երբեմն հեռուանց կը տեսնուի որ կէտ մը ջուր կը ցայտեցունէ դէպ ի վեր օդը : Եւ երբեմն կը տեսնուի սառնակոյտ մը նման բիրեղեայ լուզացող լեռին : Եթէ բաւական հեռի է կրնայ ընծայել հաճոյական տեսարան , բայց եթէ մօտ է , և մանաւանդ եթէ ծովը ծածկուած է թանձր մառախուղով , վտանգաւոր է : Անոր մօտ



ՍԱՌՆԱԿՈՅՔ

անդին է և պատուական , և ես շատ երջանիկ եմ շատ անգամ խորհելով այն երջանիկ ժամանակներուն վրայ երբ դուք կը կարդայիք մեզի Աստուծոյ խօսքը և մենք կ'երգէինք միաբերան «Տէրոջն հեա յաւիտեան :»

«Կը գրեմ զայս ուրախացունելզքեղ , և ինդրել քենէ որ չթողուս քու Սուրբ Գրոց դասդ , այլ խօսել խեղճ , փոքրիկ որք տղայոց Բարի Հովուին վրայով որ եկաւ կորսուածը վնասել և փրկել :»

Այսպիսի նամակ մը ընդունեց Գրիտոնեայ տիկին մը որ շատ աարիներ առաջ ժողովներ կ'ընէր իւր կերակրոյ սենեկին մէջ կիրակի օրերը կէս օրէն ետքը գիւղին տղոց :

«Իմ բերնէս ելած խօսքն ալ . . . ինձի պարապ պիտի չդառնայ . այլ իմ կամքս պիտի կատարէ , և յաջողութեամբ ի գործ դնէ այն բանը՝ որոյ համար զրկեցի զայն : (Ես . ԾԵ.)»

ՍԱՌՆԱԿՈՅՔ

Այն անձանց որ կը ճամբորդեն ովկիանոսաց վրայ և օրերով չեն կրնար տեսնել ուրիշ բան բայց եթէ լայնածաւալ տարածութիւն ջուրց իրենց չորս կողմը , շատ հաճելի կու գայ պատահիլ որեւիցէ բանի որ կ'ընդհատէ տեսարանին միօրինակութիւնը : Երբեմն կը հանդիպի ուրիշ նաւ մը և իւրա-

ըլլալը կ'իմացուի մթնոլորտին մէջ յանկարծ խոնաւութիւն և ցուրտ զգացուելով , բայց երբ ծածկուած է մէկի թանձր ծածկոցին ներքեւ , նաւապարը չկրնար գիտնալ թէ ո՞ր կողմ երթալու է : Սառնակոյտը թէպէտ շատ կամաց կը շարժի , կը փչրէ սակայն իրեն հանդիպող որեւիցէ նաւ , վասն զի , ինչպէս բնագիտութիւն սորվողները գիտեն , անոր զօրութիւնն է հաւասար իւր ծանրութեան և երազութեան արտադրելոյն : Արդ , կրնանք մենք ստանալ գաղափար մը անոր ծանրութեան վրայ եթէ յիշենք որ անոր զանգուածին 1/8 ը ջրին տակն է : Երբեմն սառնակոյտը 250 էն մինչև 300

ոսնաչափ բարձր կ'իլլէ ջրին երեսէն, և մեր ընթերցողք կրնան հաշուել թէ անոնք որչափ խոր իջած են ջրին տակը : Սառնակոյտք երբեմն կ'ունենան միոններով սարածութիւն : Տեսնուած է հատ մը 13 մոն երկայնութեամբ :

Արդ երբ այսպիսի ահագին դանդուած մը դարնէ նաւուն, հարկաւ կը փչրէ դայն անմիջապէս : Բնաիր շատ նաւեր այսպիսի վախճանի հանդիպեցան և բնաւ չլուեցաւ անոնց վրայ այնուհետև :

Սառնակոյտք կու գան երկրիս բեւեռներուն մերձակայ ջուրերէն : Հոն ջուրերը կը սառին հեղհեղէն խորունկը մինչև որ սառը կը բեկանի ահագին հատորներու և կը լողայ դէպի աւելի տաք ջուրերը մինչև որ դարձեալ ջրոյ փոխուի : 1817ին հազարաւոր քառակուսի մոն տարածութեամբ սառի հատորներ կային իսլանտայի հիւսիսային կողման ծովերուն մէջ, և ովկիանոսը լեցուն էր այդ տարի սառնակոյտերով : Սառնակոյտք որ ըստ օրէ կը պղտիկնան, և ընդհանրապէս ժամանակ ետքը այնչափ դէպ հարաւ կը քալեն որ կը հասնին մինչև Նիւ Եորքի լայնութիւնը և յայնժամ բոլորովին կը հալին :


ՎԵՐՁԻՆ ԵՐԳԸ

Դիպուած մը կը պատմուի որ պատահած է Նիւ Եորքի հիւսիսային կողմէն մէջ, որմէ հիւսիսային կողմէ մը տարուեցաւ այրած մանուկ մը բերելու համար :

Այն էր փոքրիկ աղջիկ մը զոր իւր ծնողքը զրկած էին տան մասանք՝ վառելու փայտ բերելու համար : Երբ վար կ'իլլանէր սանդուղէն, գորեցաւ և ինկաւ անոր ձեռքէն քարիւղի կանթեղը որ պայթեցաւ և անկէ կրակ առին աղջկան հանդերձները : Վերաբոյժը փաթեց խեղճ աղջիկը և դրաւ կառքին մէջ, պատուիրելով կառապանին որ չուտով հիւանդանոց հասցունէ զայն :

Հիւանդանոցին մէջ ըրին ամէն դարման զոր գիտութիւնը կրնար ընել տալ, բայց անկարելի եղաւ ազատել անոր կեանքը : Թմբեցուցիչ գեղ մը արուերով անոր ինկաւ ի քուն : Քանի մը ժամ ետքը արթննալով ջուր ուղեց : Հիւանդապահն իսկայն կանչեց բժիշկը : Մէկ վայրկեանի մէջ բժիշկը եկաւ հիւանդին քով : Նայեցաւ բարկերակը, և գլխովը նշան ըրաւ թէ վտանգաւոր վիճակի մէջ էր աղջիկը : Խուս քանի մը հրահանգներ և գնաց : Երբ կը մեկնէր բժիշկը,

փոքրիկ աղջիկը քիչ մը մէկ կողմ դարձաւ : Մոմի մը աղօտ լոյսը կը ծագէր անոր սեցած երեսին վրայ : Ուռած շրթունքով սկաւ երգել մեռնող մանկիկը յասակ և քաղցր ձայնով « Այ մօտ ըլլամ, ո՛վ Տէր » երգը :



ԸՆՁՈՒՂՏ

Ընձուղար կը գտնուի Ափրիկէ միայն, և բարձրագոյնն է կենդանեաց : Երբեմն արու ընձուղար 18 սաք բարձրութիւն կ'ունենայ, որ ըսել է հասարակ երեք բարձրահասակ մարդոց

ԸՆՁՈՒՂՏ

բժիշկը և հիւանդապահը ապշած մնացին : Միւս հիւանդք լուրսութեամբ, և ուրիշներ որ կը գտնուէին հիւանդանոցին մէջ ախորժով մտիկ կ'ընէին այն քաղցր երգին : Երբ երգին առաջին տունը լնցաւ, աղջկան ոյժը սկաւ հասնիլ, անոր հետ նաև ձայնը, և միայն հեռիէն ցած ձայնով եղանակի մը պէս կը լուէր երգը : Երբ այս վերջացաւ, աղջիկը հանեց հառաչանք մը և դադարեցաւ ապրելէ :

բարձրութեան որ կանգնած ըլլան իւրաւրու գագաթնան վրայ : Ընձուղարն ուտեստն է կարգ մը ծառոց տերևները զորս կը փրցունէ ծառոց ոստերէն իւր երկայն և բարակ լեզուաւ : Պարանոցին մէջ քիչ յօդուածներ կան, վասն որոյ մեծ դժուարութեամբ կը ծռէ իւր մարմինը ջուր խմելու համար, կամ երբ ուտելիք առնու գետնէն :

Ոստիկաններն են երկայն և նեղ, և պաշտպանեալ՝ մազերով, այնպէս որ կենդանին կրնայ գոցել զանոնք աւազի փոթորիկներու դէմ որ շատ կը պատահին անապատներուն մէջ: Ունի երկու կարծ եղջիւրներ իւր գլխուն վրայ զորս կը գործածէ իբրև դէնք, ոչ թէ անոնցմով խեթկելով նման խոյերու, այլ կողմնակի զարնելով իւր պարանոցն առարկային դէմ որուն վրայ կը յարձակի: Կ'աքացէ այլ իւր ոտքերով: Մարմինը ծածկուած է դեղինի մօտ ճերմակ կարծ մազերով ուրուն վրայ միտազոյն պիտակներ կան, նման ընձու մորթոյ:

Ընձուզոր կ'որսան մարդիկ անոր մինչ համար զոր ուտել շատ կը սիրեն Ափրիկեցիք, նաև անոր մորթոյն համար զոր կը գործածեն հողաթփափ շինելու և իրենց վրաններուն ծածկուածի համար: Ծատ արագ կրնայ վազել այնպէս որ դուն ուրեք հնար է հասնել անոր ձիով:

Շուները չեն համարձակիր մօտենալ անոր, և երբեմն կը պաշտպանէ զինք առիւծուց յարձակմանէն, այնպիսի արագութեամբ կից արձակելով որ աչքն հաղիւ կարող է նշմարել անոր ոտից շարժումները:

ՄԱՐԳՍ ԻՆՁ ՆԻՒԹԵՐԷ ԿԸ ՇԻՆՈՒԻ

Քիչեր ունին որոշ գաղափար թէ որչափ նիւթ պէտք է մարդ մը շինելու համար:

Ո՛րչափ տղայք կը գտնուին արդեօք որ կրնան հաշուել թէ ո՛րքան կ'ուտեն, կամ ո՛րքան ստակ կը ծախսուի գնելու համար կերակուրը զոր կ'ուտեն, և թէ ո՛րքան գործ կը գործուի զայն պատրաստելու համար:

Գաղղիւ և Անգղիոյ բանակաց և նաւատորմաց ուտեստի ցուցակներէն կը հետևեցուի թէ իբր 320 արեմ չոր ուտելիք պէտք է ամէն օր իւրաքանչիւր մարդու: Ասոնց իբր երեք չորրորդն է բանջարեղէն, իսկ մնացածը՝ մսեղէն: Եւ ամբողջ տարին՝ գումարը կը հասնի 288 քաշի: Այլև այլ ըմպելիներու, շուրի, և այլն, զորս կը խմէ մարդ, ամբողջ գումարը մէկ տարին կը հասնի 530 քաշի: Տարուան մէջ շնչած օդը՝ 285 քաշի: Արդ՝ այս թիւերը մեր առջև ունենալով կարող ենք ըսել թէ մարդու մը կերակուրը, ըմպելիները և շնչած օդը, ընդ ամենայն՝ կը հասնին օրը 3 քաշի, կամ տարին՝ 1,100 քաշի, ըսել է իբր 20 անգամն անոր ծանրութեան: Այս ահազին քանակութիւնը կը ցուցնէ թէ որչափ նիւթ կը ծախսուի մարդկային կեանքը պահելու համար: Աշխարհիս վրայ ապրող էակ մը արդիւնք է շատ փոփոխութեանց:

Դիցուք թէ մարդկային կենաց առաջին քան տարիներուն մէջ ուտեստի քանակութիւնն է չափահաս մարդու մը ուտեստին կէսը, ապա ուրեմն 11,000 քաշ նիւթ կը ծախսուի մարդու կենաց առաջին քսան տարիներուն մէջ: Եւ կը տեսնենք հոս թէ ո՛րչափ բան կը սպառուի մանկիկի մը մարդկութեան հասակին ժամանակուն համար:

Սեպտեմբեր թէ մարդն ապրէր ասոր վրայ յիսուն տարի ևս, ըլլալով եօթանասուն տարեկան, այդ տարիքին հասնելու համար պէտք էր անոր՝ 55,000 քաշի նիւթ, կամ ընդ ամենայն 66,000 քաշ նիւթ միայն մէկ մարդ շինելու համար:

Ով որ չուզեր գործել, յիւրախ պէտք չէ որ ուտէ այսպիսի գործունեայ և բազմաշխատ աշխարհի մը մէջ, վասն զի գիւրին բան չէ մարդու մը համար ճարել է՛ք հացը, թող թէ կերակրել ծոյլերը որ չեն ուզեր գործել և շահել իրենց հացին ստակը: Եւ ով որ իրեն բաւական ուտեստ կը գտնէ, պարտի շնորհակալ ըլլալ բայց աւանդ, որ շատեր անօթի կը մնան, և կան շատեր որ թէպէտ կ'ուտեն և կը կշտանան, կը տրտնջեն սակայն և կը գանգատին իրենց վիճակին վրայ:

ԱՐՁՈՒՆ ԹԱՂԹՈՂ ՏՂԱՅ ՄԸ

Ծատ պատմութիւններ կան կենդանեաց և մասնաւորապէս արջուն ուշիմութեան, խորագիտութեան և իմացութեան վրայ, վասն որոյ թերևս հաճելի պիտի գայ կարդալ հետևեալ պատմութիւնը, որուն մէջ կը տեսնուի թէ որսորդին տղան որ անտառներուն մէջ մեծցած էր, ինչպէս ճարտարմտութիւն ցուցուց գտնելով հնար յաղթել արջուն:

Թերևս եթէ այցելէիք Մէյն նահանգին հիւսիսային մասը ուր ձկնորսութիւն կ'ընեն մարդիկ և թակարթներով կենդանիներ կ'որսան, կը տեսնէիք փոքրիկ տուն մը լեռան մէջ և անոր ուղղակի ետևը՝ անտառ մը: Այս շինեց թոմաս Սիլմն: Ես կը լարէ թակարթները շրջուն, յովազ և բէշկ մշկոյ բռնելու, և կը ծախէ ասոնց մուշտակները հոն այցելող վաճառականներու: Եթէ ցերեկ մը հոն մնայիք, անոր տղան թերևս պիտի պատմէր ձեզի թէ ինչպէս հաղիւ կարող եղաւ պրծիլ վտանգէ մը: Ես պիտի պատմեմ ձեզ այն արկածը ինչպէս որ լսեցի այն տղէն:

«Օր մը մինակ էի», ըսաւ, «մայրս և հայրս գացած ըլլալով լեռանց մէջ բնակութիւն հաստատուած մօտագոյն տեղը: Ինձ վերաբերեալ բոլոր գործերն ընելէ ետքը, գացի տուն և առնելով լրագիր մը նստայ կարդալ: Ծուռով այնպէս խորին ուշադրութիւն տուի պատմութեան մը որ չէի գիտեր թէ ինչ կը դառնար բոլորտիքս:

Եթէ վեր նայէի՝ կրնայի տեսնել սև առարկայ մը որ զգուշաւոր կերպով

դուրս կ'ելլէր անտառէն: Բայց չիմացայ բան մը մինչև որ լսեցի ցած մըրմուռ մը, և նայելով վեր ահա տեսայ սև արջ մը որ կայնած ինծի կը նայէր: Ճշեցի, և չորս կողմն նայելով որ գտնէի փակելու ճամբայ մը, տեսայ սանդուղ մը տանիքին կոթընամ:

Հայրս տան տանիքին վրայ արուած տեղ մը շինած էր առջի օրը և մուռ ցած էր սանդուղն անկէ վեր առնելու: Սանդղին վրայէն ելայ տանիքը: Բայց մեծ ստկումով տեսայ որ արջը իմ ետևէս սկսաւ սանդղէն ելլել վեր: Երբ ես հասայ տանիքը, արջը դուրսի թաթը տանիքին վրայ սանդղին վերի ծայրին չուրջը: Մէկ վայրկենէն իրարու քով պիտի ըլլայինք արջը և ես: Բայց միտքս խորհուրդ մը եկաւ: Չէի՞ կրնար արդեօք վար ցատկել տանիքին միւս կողմէն: Ծուռով վազեցի տանիքին եզրը և գետին ցատկեցի ապահովապէս և Այնուհետև տան միւս կողմը վազեցի և վար քաշեցի սանդուղը: Այսպէս արջը մնաց տանիքին վրայ առանց ունենալու միջոց անկէ վար իջնելու: Երբ հայրս տուն եկաւ, զարկաւ արջը և ծախեց մորթը»:

ՊԱՏԱՍԻՍՆ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Ազրիւ ամեղ ճանեղակին պատասխանը կը բազմապէս Ար, Սէթ, Կորի, Արդու, Ղերմա, Ռոդի-բայ, Նեւադոյի բռնորէն, որոց սկզբնատաւերը կամ ձեռքեալ եւանկեան հակողղին վրայ գլխաւոր գերեզ կը կարգացուին վերէն վար Ասկազն:

Բայց այնչափ շատ պատասխաններ ընդունած ենք որ կարող չեղանք դնել զայնս հոս տեղոյ անձկութեան պատճառաւ:

Սոյն հանելուկը զրկած էր մեզ Վահան Գալուստեան, Պարտիզակ:

ՀԱՆԵԼՈՒԿԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

Իմ հինգ բառից առաջինն է Նոյայ թոռը, երկրորդը՝ Գամակոսի մի գետն, երրորդը՝ Հրեայ մարգարէ մը, չորրորդը՝ հայր Յետապ մարգարէին, և հինգերորդն՝ ածական մը:

Այս հինգ բառերն միմեանց տակ շարելով պիտի ունենաս քառակուսի մը, որ եթէ ձախէս ալ և վերէն վար կարդաս նոյն բառերն պիտի գտնես և նոյն կարգաւ:

Ազրիւ 13, 1887 ԱԶԱՐ Ե՝ ԱԶԱՐԵԱՆ Ատափաղար

Ամերիկայի Մեխիկոսապ ընկերութեան կողմէն, Արտօնատէր Ջ. Ք. ՊԻՐԻՆ Տնօրէն—Խմբագրը Հ. Ա. ՊԱՐՆԸՄ Յիմնանճրար եօգուշու լրատուական թան:

ԿՈՍՏԱՆԳՈՒԳՐԱԿԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ԹԱԿՈՐ ԳՈՅՈՒՅԵԱՆ